




# Ազդարարության Trumpet's Sound փող

50-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ  
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019





# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: pastor@armenianbrethren.org  
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աստծո հետ հանդիպում ..... Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Աստծո աղերսել ..... Դոն Սթորմըր

Դավիթը՝ որպես որդի ..... Մանկանց ավետ. ընկ.

Մովսես (2) ..... Փոլ Ուայթինկ

Եկեղեցու պատմությունը (8) ..... QMBC պանորամա

Աստծո տված պարգևները (1) ..... Ռեքս Տիրլավ

Քրիստոնեական միասնություն ..... Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Բաղասամ ..... Վեր.՝ Հապիպ Ալաճաճի

Մի՛ դատիր ..... Բաֆֆի Չափարյան

## **Աստծո հետ հանդիպում**

### **«Պատրաստվի՛ր քո Աստծուն դիմավորելու» (Ամովս 4:12)**

**Ա**մովսն իր ժամանակակից մարդկանց համար շատ խիստ նախագուշացում ուներ. «Պատրաստվի՛ր քո Աստծուն դիմավորելու» (Ամովս 4:12): Սա ողջ մարդկությանն ուղղված պատգամ է, քանի որ մի օր բոլորս դեմ առ դեմ հանդիպելու ենք Աստծուն:

Այս հողվածում անդրադառնալու ենք դատաստանի օրը Աստծո հետ հանդիպելուն, բայց նախևառաջ եկեք մտածենք Նրա հետ հանդիպման այլ կերպերի մասին: Հիմա մենք կարող ենք Աստծուն հանդիպել և ընդունվել Նրա կողմից:

#### **1. Ապաշխարությունը որպես Աստծուն մոտենալու միջոց**

«Ոչ թե ամեն ոք, որ Ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, պիտի մտնի երկրնքի թագավորությունը, այլ նա՝ ով կատարում է Իմ Հոր կամքը, որ երկնքում է» խոսքը շատ տեղին է:

Շատ մարդկանց են հանդիպում, ովքեր ասում են, թե մանկությունից մկրտված են, սերնդեսերունդ քրիստոնյա են մեծացել, կիրակի օրերին եկեղեցի են գնացել ու պահել են բոլոր ծիսակարգերը: Հարցնում են, թե ապաշխարելու ի՞նչ կարիք կա, ի՞նչ է նշանակում ապաշխարություն: Ասում են՝ երբեք չեն լսել այդ բառը:

Երբ հասկանում են, որ Տերն ուզում է տեսնել, թե որքանով են հնազանդված Իր Խոսքին, այն ժամանակ գիտակցում են, որ խախտել են Աստվածաշնչում գրված Նրա բոլոր հրամանները: Ես գիտեմ, որ պետք է ապաշխարեմ: Աստվածաշունչը հստակ է, բոլորս մեղանչեցինք, ուստի բոլորս պետք է ապաշխարենք:

Երբ ապաշխարում ենք, տեսնում ենք, որ մեր Աստվածը շնորհալի է. Նա փրկության դուռ է բացել: Մենք փրկվում ենք շնորհով և ոչ թե գործերով: Մենք փրկվում ենք Տեր Հիսուսի զոհաբերության, մեզ համար թափված Իր թանկագին արյան միջոցով:

## 2. Մենք մոտենում ենք բժշկության համար

Մատթեոսը (14:14) պատմում է մի դեպքի մասին, երբ Տերը եկավ ծովեզերք ու տեսավ մեծ բազմություն: Նա գթաց նրանց ու բժշկեց հիվանդությունները: Այսօր էլ, Տերը նույնն է. եթե ֆիզիկական ու հոգևոր ապաքինման կարիք ունենք, կարող ենք Նրա մոտ գալ ու աղաչել. «Տեր, օգնի՛ր ինձ»: Ես իմ կյանքից փորձառաբար գիտեմ, թե քանի՞ անգամ եմ աղաչել Տիրոջը՝ ասելով. «Տեր, օգնի՛ր ինձ», և տեսել Նրա հրաշալի բժշկությունը, որը զարմացրել է իմ բժիշկներին: Երկնքից Նա կոչ է անում մեզ Իրեն հանդիպել, քանի որ Իր հպման կարիքն ունեցող արարչագործությունն ենք: Նա իսկապես կարող է օգնել մեզ մեր պատկերացրածից ավելի:

## 3. Մենք մոտենում ենք զորության համար

Երբ իրավիճակները վատթարանում են, երբ թուլանում ենք, երբ հանձնվելու եզրին ենք, երբ ամեն ինչ խավար է, ո՞ւմ ենք դիմում: Արդյոք պատրա՞ստ ենք Նրա մոտ գալու և մեր անձերը Նրա ոտքերի մոտ նետելու: Երբ սպառված ենք զգում և այլևս մեր բեռը կրելու կարողություն չունենք, Տիրոջից օգնություն ենք խնդրում ու տեսնում ենք, որ Տեր Հիսուսը կրկին ու կրկին մեզ օգնության է հասնում: Մենք պետք է կարողանանք Դավթի պես ասել. «Իմ օգնությունը Տիրոջից է, Ով երկինքն ու երկիրն ստեղծեց» (Սաղ. 121:2):

Չարմանալին այն է, որ Նա ոչ միայն զորացնում է մեզ, այլև հոգում է մեր բոլոր կարիքները: Սողոմոնը գրեց. «Ինձ խնջույքի տունը բերեց: Նրա դրոշն ինձ վրա սեր էր»: Եկե՛ք Նրա մոտ ու թո՛ւյլ տվեք, որ Նա առաջնորդի ու ծածկի ձեզ Իր սիրով:

## Քո Աստծուն դիմավորելու պատրաստվի՛ր

Այս պատգամը կարևոր ու կենսական է, քանի որ բոլորս պիտի կանգնենք Աստծո դատաստանի առջև. «Որովհետև գրված է. Ես կենդանի եմ, - ասում է Տերը, - ամեն ծունկ պիտի խոնարհվի Ինձ և ամեն լեզու պիտի խոստովանի Աստծուն: Ուրեմն մեզնից ամեն մեկը հաշիվ պիտի տա Աստծուն իր անձի համար» (Հռոմ. 14:11-12):

Մենք մեր Աստծուն դիմավորելու ենք պատրաստվում, քանի որ դատաստանի օր կա, օր, որից ոչ ոք չի կարողանա խուսափել: Ադամը

փորձեց թաքնվել, Դավիթն էլ հասկացավ, որ որքան էլ ջանք աներ, չէր կարողանա փախչել Նրա երեսից:

«Ո՞ւր գնամ Քո Հոգուց և Քո ներկայությունից ո՞ւր փախչեմ: Եթե երկինք բարձրանամ, Դու այնտեղ ես, եթե անկողինս դժոխքում դնեմ, սհա Դու այնտեղ ես, եթե արևածագից թևեր վերցնեմ և ծովի ամենահեռավոր եզրերում բնակվեմ, այնտեղ էլ Քո ձեռքն է ինձ առաջնորդելու, ու Քո աջ ձեռքը բռնելու է ինձ» (Սաղ. 139:7-10):

«Պատրաստվել» բառը գործողություն է ենթադրում: Մենք պետք է ինչ-որ բան անենք, որպեսզի պատրաստ լինենք Նրան դիմավորելու: Մենք պետք է ապաշխարությամբ ու հավատով Նրան դարձի գանք:

Եկեք քաջալերվենք ու մխիթարվենք՝ հիշելով, որ Աստծո բոլոր զավակները հավաքվելու են Իր ներկայության մեջ՝ երկրպագելու Նրան, ում սիրեցին: Նա է այն մեկը, ով մեզ այսքան օրհնեց ու Իր միածին Որդուն տվեց մեղավորներիս փրկության համար:

Արդյոք պատրաստ եք դատաստանի օրվա համար: Արդյոք պատրաստ եք Աստծուն դիմավորելու:

Հ. Գ.

## **Աստծո աղերսել**

### **Կարդացե՛ք Ծննդոց 18:16-33-ը**

**Մ**ամբրեի վրանների այցն ավարտվեց: Աբրահամի այցելուները նրա հյուրասիրությունը վայելելուց հետո ոտքի ելան՝ իրենց ճամփան շարունակելու համար: Աբրահամը՝ որպես լավ հյուրընկալ, ընկերացավ նրանց՝ ճանապարհին նրանց հետ քայլելու համար: Այնուամենայնիվ, դեռ մի բան կար, որի մասին Տերն ուզում էր խոսել Աբրահամի հետ:

Տերը հռետորական հարց տվեց. «Մի՞թե Ես գաղտնի եմ պահելու Աբրահամից այն, ինչ անում եմ»: Տիրոջ հարցի համար երկու պատ-

ճառ կար: Առաջին՝ Աբրահամը մեծ ու գորավոր ազգ էր լինելու, ու երկրի բոլոր ազգերը նրանով էին օրհնվելու: Աստված Աբրահամին շուտով պատմելու էր, թե ինչ էր լինելու այն ազգին, որ հրաժարվեց Իր առջև խոնարհվելուց:

Երկրորդ՝ Աստված ճանաչում էր Աբրահամին (հմր 19): Սա հատուկ նշանակություն ունեցող արտահայտություն է: Ամուսնու 3:2-ը երկու ձևով է թարգմանված. «Երկրի բոլոր ազգատոհմերից միայն ձեզ եմ ճանաչել» և «Երկրի բոլոր ազգատոհմերից միայն ձեզ եմ ընտրել»: Այլ խոսքով երբ Աստված ասաց, թե ճանաչում է Աբրահամին, նշանակում էր, որ Նա նրա հետ առանձնահատուկ հաղորդակցություն ուներ: Աստված գիտեր, որ Աբրահամն իր որդիներին ու իրենից հետո իր տանը պատվիրելու է Տիրոջ ճամփաները պահել: Այնուհետև նրա սերունդներն արդարությամբ էին գործելու, որպեսզի Աստծո՝ Աբրահամին ասած խոսքերը կատարվեին:

Տերն Աբրահամին շուտով հայտնելու էր Սողոմի վերաբերյալ Իր ունեցած մտադրությունները: Քաղաքի աղաղակն այնքան մեծ էր և նրանց մեղքն այնքան լուրջ, որ Նա որոշեց կատարվածն ամբողջությամբ զննել ու տեսնել, թե արդյոք Իրեն եկած աղաղակի պես արեցի՞ն, թե՞ ոչ: Աստված զննող է, ով լիարժեք հետաքննություն է անցկացնում նախքան Իր դատավճիռը կայացնելը: Նա դաշտի քաղաքների վրա դատաստան չի բերի, եթե հիմնավոր պատճառներ գրտնըվեն: Մեր Աստվածը պահի ազդեցության տակ չի գործում:

Երկու հրեշտակները, ովքեր Տիրոջ հետ էին, վեր կացան ու դեպի Սողոմ զննեցին՝ քաղաքի մեղքը քննելու համար, իսկ Աբրահամը Նրա առջև կանգնած մնաց: Տիրոջ առջև կանգնած մնալը ցույց է տալիս Աբրահամի և Տիրոջ միջև եղած մտերիմ հարաբերությունը:

Կարելի է պատկերացնել Աբրահամի խորհուրդները, երբ կանգնած էր Տիրոջ առջև: Եթե Սողոմը կործանվի, ապա ի՞նչ կլինի իր եղբորորդու ճակատագիրը: Տպավորությունն այն է, որ Աբրահամը քաջատեղյակ էր քաղաքի մեղքի մասին, բայց անհանգստանում էր քաղաքում գտնվող արդար մարդկանց համար, մասնավորապես իր եղբորորդու՝ Դավիտի և նրա ընտանիքի համար:

Աբրահամի հարցը հետևյալն էր. «Արդյոք ամբարշտի հետ արդա-

րի՞ն էլ ես կործանելու»: Գուցե Աբրահամը չէր պատկերացնում, որ քաղաքն այնքան վատն էր, որ բոլորն արժանի էին կործանման: Գուցե քաղաքում 50 արդար մարդ գտնվեր: Արդյոք Տերը 50 արդար մարդկանց Սողոմոնի ամբարիշտների հետ կկործանե՞ր: Անշուշտ, Աստված ամբարիշտների հետ չի կործանի արդար մարդկանց: Անհավատալի է սա: Ուստի Աբրահամը հարցրեց. «Մի՞թե բոլոր երկրի Դատավորը արդարություն չի անի»:

Տիրոջ պատասխանը միանշանակ էր. «Եթե Սողոմոն հիսուն արդար գտնեմ, նրանց համար ամբողջ վայրը կխնայեմ»:

Գուցե մտածենք, թե Աբրահամը չափանիշը շատ բարձր դրեց: Նա արդար մարդկանց թիվը աստիճանաբար իջեցրեց, որոնց համար Աստված գուցե խնայեր քաղաքը: Այս ընթացքում Աբրահամը գիտակցում էր իր աննշանությունը և որ իրավունք չունի Ամենակարողից որևէ բան պահանջելու: Նա ինքն իր մասին արտահայտվեց որպես հող ու մոխիր: Այսպիսով, քաղաքը խնայելու համար արդարների անհրաժեշտ թիվը՝ 50-ից իջավ 44-ի, 40-ի, 30-ի և 20-ի: 40-ից 30-ի անցնելու ժամանակ Աբրահամը խնդրեց, որ Տերը չբարկանա իր վրա: Նա կրկնեց նույն խոսքը 20-ից 10-ի իջնելու ժամանակ, բայց ավելացրեց՝ ասելով, թե սա իր վերջին խնդրանքն է:

Աբրահամն արդար մարդկանց թիվը 10-ի իջեցրեց ու կանգնեց: Հետաքրքրական է, թե ինչո՞ւ: Գուցե Աբրահամը մտածում էր, թե անհնար է, որ Սողոմոն առնվազն տասը արդար մարդ չգտնվի: Մենք չգիտենք Դավտի ընտանիքի բոլոր մանրամասները, բայց գիտենք, որ Դավտը կին ու երկու դուստր ուներ: Մենք նաև գիտենք, որ հրեշտակները Դավտին հարցրին, թե Սողոմոն ընտանիքի ուրիշ ինչ անդամներ ունի՞ փեսաներ, որդիներ և դուստրեր: Նա պետք է նրանց Սողոմոնից դուրս հաներ: Գրված է, թե երբ Դավտը խոսեց իր փեսաների հետ, նրանք մտածեցին, թե կատակ է անում:

### **Ի՞նչ դասեր կարող ենք քաղել այս պատմությունից**

- Աբրահամի՝ 50-ից 10-ի իջնելու մասին պատմությունը կարդալով՝ գուցե մտածենք, թե նա վստահ չէր՝ ինչ պետք է խնդրեր: Սա զարմանալի չէ: Հաճախ մենք չգիտենք, թե ինչի մասին պետք է

աղոթենք: Սա Հռոմ. 8:26-ի պատգամն է: Երբ չգիտենք՝ ինչի մասին աղոթել, Հոգին Ինքը բարեխոսում է մեզ համար:

- Աստված մեզ չի հանդիմանում շատը խնդրելու համար: Աբրահամի՝ 50-ից 10-ի իջնելու մեկնաբանությունները ցույց են տալիս, որ նա մտածում էր, թե գուցե անցել է թույլատրելի գիծը: Արդյոք Աստծուց շա՞տ բան էր խնդրում:
- Աբրահամն ակնաձանքով էր վերաբերվում Աստծուն իր խրնդրանքն արտահայտելու ժամանակ: Ոչ մի փուլում ոչինչ չպահանջեց, քանի որ Տիրոջը խնդրում էր ողորմությամբ վարվել: Սա մաքսավորի մոտեցումն է, երբ տաճար գնաց՝ աղոթելու. նա խրնդրեց, որ Աստված ողորմած գտնվի իր՝ մեղավորի նկատմամբ:
- Դատավճիռը հաստատ է. սուրբ Աստծո ղեմ բոլոր ըմբոստները պիտի ստանան Նրա արդար պատիժը: Կործանվածների մեջ էր նաև Դավիթի կինը: Կարելի է ենթադրել, որ այս կնոջ սիրտը դեռ Մոդոնում էր. իսկական ապաշխարություն չկար: Հավիտենական կորուստ են կրելու բոլոր նրանք, ովքեր չապաշխարեցին: Իրենց մեղքերից դարձի չեկողների միակ ճակատագիրը հավիտենական կորուստն է:

Արդյոք Աբրահամի աղոթքը պատասխանվե՞ց: Այո՛, Աբրահամի սկզբնական մտահոգությունն ամբարիշտների հետ արդարների կորչելն էր: Նրա փափագն այն էր, որ արդարները խնայվեին: Նա չգիտեր, թե իր աղոթքն ինչպես էր պատասխանվելու, բայց պատասխանվեց: Սա հաճախ նույնպես պատահում է մեզ հետ: Հատուկ մտահոգություն ունենք, որ Տիրոջ առջև ենք բերում, նույնիսկ խրնդրում ենք, որ Նա որոշակի ձևով գործի: Սակայն մեր սահմանափակ մտքով չենք կարող տեսնել ամբողջ պատկերը: Մենք չգիտենք, թե Աստված ինչու է թույլ տալիս, որ որոշ բաներ պատահեն մեզ հետ: Բայց Նա ամեն բան Իր իշխանության տակ է պահում, և ետ նայելով՝ տեսնում ենք, որ Աստված մեր պատկերացրածից ավելի է պատասխանել մեր աղոթքներին:

Մեր կարիքներն ու մտահոգություններն աղոթքով բերո՞ւմ ենք Աստծուն: Արդյոք ակնկալո՞ւմ ենք, որ Նա կպատասխանի այնպիսի ձևով, որ Իրեն ամենաշատը փառք կբերի:

Դ-ոն Սթոբմըր



## **Դավիթը՝ որպես որդի**

### **Հոգևոր աճի սերտողաշար մանուկների և պատանիների հետ աշխատողների համար**

«Որդիներ, ամեն բանի մեջ հնազանդ եղեք ձեր ծնողներին, որով-  
հետև դա է հաճելի Տիրոջ առջև» (Կող. 3:20):

Փոքր բաների մեջ հավատարիմ անձին հնարավորություն կտրվի  
ներգրավել մեծ բաների մեջ:

Դավթի հավատարմության հետագա կյանքում դրսևորվելիք ար-  
մատները ձգվել էին նրա մանկության ու դեռահասության տարիներ-  
րին: Նրա հնազանդությունն ու հպատակությունը իր հորը գալիքի  
վաղ փաստարկներ էին: Աստծուն ծառայելը սկսվում է տանը, ու եթե  
անձը չի սովորել ծնողներին հնազանդվելու արժեքն ու անհրաժեշ-  
տությունը, նա Աստծո ծառայության մեջ շատ արժեքավոր չի լինի:  
Պատահական չէ, որ երբ Պողոսը գրում է Եփեսոսի ու Կողոսիայի  
հավատացյալներին՝ դիմելով այդ երկու եկեղեցիների հավատացյալ  
երեխաներին, նրանց պատվիրում է վերոհիշյալ համարի խոսքերը,  
այն է՝ հնազանդվել ծնողներին:

Ծնողներին հնազանդվելն Աստծուն հնազանդ կյանքի հիմնաքարն  
է: Այն երեխան, ով սովորել է հնազանդվել իր ծնողներին, Աստծուն  
հնազանդ լինելու ավելի մեծ հավանականություն ունի:

Ուստի երբ Հեսսեն՝ Դավթի հայրը, նրան մի բան էր պատվիրում  
ասել, նա անմիջապես անում էր:

Վաղ տարիքում Դավթին հանձնարարվել էր հոգ տանել հոր ոչ-  
խարների մասին, ու նա անում էր այն, ինչ հայրն ասել էր իրեն:

Դավիթն իրենից ավագ յոթ եղբայր ուներ: Կարող էր պահանջել, որ  
նրանք հոգային ոչխարների մասին, ոչ թե ինքը: Նա ընդունեց պա-  
տասխանատվությունը, որն իրեն տրվել էր որպես կրտսերի, ու չկա  
տրտնջալու կամ ամառկության որևէ ապացույց:

Այնուհետև երբ հայրը նրան պատվիրում է Սավուդի մոտ գնալ (Ա Թագ. 16:19-20)՝ վերջինիս համար քնար նվագելու և նրան խաղաղեցնելու ու հանգստացնելու համար, Դավիթը հնագանդվում է անխոս (Ա Թագ. 16:21), թեպետ դեռահասի համար դա վախեցնող գործ էր:

Երբ հայրը նրան ասաց, որ ուտելիք տանի իսրայելական բանակում գտնվող եղբայրներին, նա անմիջապես հնագանդվեց (Ա Թագ. 17:17-20), թեպետ մարտի դաշտին այդքան մոտենալն իր մեջ վտանգ էր կրում: Ինչևէ, նա կարծես թե հրճվում էր դրանից:

Տարիներ անց, երբ նա փախչում էր Սավուդից, անհանգստացած էր հոր, մոր ու ընտանիքի համար. չլինի թե Սավուդը վնասի նրանց: Ուստի նրանց տեղափոխեց անվտանգ վայր Մովաբում (Ա Թագ. 22:3):

Այս ամենի մեջ Դավիթը հավատարիմ ու հնագանդ եղավ որպես որդի:

Սա կարևոր ուսուցում է մեր երեխաներին սովորեցնելու համար:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

## **Մովսես (2)**

### **Կարդացե՛ք Ելից 3-րդ գլուխը**

#### **4. Աստված նպատակային է գործում**

Աստված Իր զարմանահրաշ գործերը գլխավորապես կատարում է Իր ժողովրդի միջոցով, որը պատրաստ է անելու Իր կամքը: Դիտարկենք մեր փրկությունը: Մեզանից շատերն Աստծո ընտանիքի մաս կազմեցին, քանի որ ինչ-որ մեկը հնագանդվեց Աստծո՝ իրեն ուղղված ցուցումներին: Եղան մարդիկ, ովքեր հնագանդվեցին ու աղոթեցին ձեզ համար, ուրիշներն էլ Ավետարանը բացատրեցին: Եվ այսպես շարունակ, մինչև որ Աստծո Հոգին գործն ավարտեց Իր ժո-

դավրդի և ձեր միջև՝ ձեզ դարձնելով նոր ստեղծագործություն, Աստծո հավիտենական ընտանիքի անդամ:

### **Մովսեսի արձագանքը**

Մովսեսի ասածը կանխատեսելի էր: Բայց Աստված անմիջապես պատասխանեց նրան՝ ասելով. «Ես քեզ հետ կլինեմ» (հմր 12): Արդյոք սա բավարար չէ՞: Մենք հավատո՞ւմ ենք սրան: Դեյվիդ Լիվինգստոնին՝ Աֆրիկայի նախակարապետ միսիոներին, հարցրին, թե որպես միայնակ միսիոներ ինչպե՞ս կարողացավ հաղթահարել Աֆրիկայի միսիոներական կյանքի բոլոր տառապանքները, հիվանդություններն ու դժվարությունները: Նա պատասխանեց. «Ահա ամեն օր Ես ձեզ հետ եմ, մինչև աշխարհի վերջը» (Մատթ. 28:20): Աստծո անհերքելի խոստումը տրվում է Մովսեսին, նաև մեզ. «Ես քեզ հետ եմ լինելու միշտ, ամեն պարագայում՝ ցավի և ուրախության մեջ: Ես քեզ հետ եմ լինելու»: Աստված վերահաստատեց Մովսեսին՝ ասելով. «Եվ սա քեզ համար նշան կլինի, որ Ես եմ ուղարկել քեզ. երբ ժողովրդին Եգիպտոսից հանես, այս լեռան վրա կպաշտե՛ք Աստծուն» (հմր 12):

### **Մեծ հայտնությունը**

13-րդ համարում տեսնում ենք մեծ հայտնություն: Մովսեսը հարց է տալիս, որն առաջին հայացքից կարծես թե գործնական է. «Երբ ինձ ասեն. «Ի՞նչ է Նրա անունը, ես ի՞նչ ասեմ նրանց»: Մովսեսն Աստծուն անձամբ դեռ չէր ճանաչում: Աստված Իր անձը քիչ-քիչ հայտնեց Մովսեսին, և նա իր կյանքի վերջին տարիներին Աստծո հետ էր խոսում, ինչպես բարեկամը բարեկամի հետ՝ «երես առ երես» (Բ Օր. 34:10):

Ուստի Աստված Մովսեսին ասաց. «Ես Եմ, ՈՐ ԵՄ», և ասաց. «Այսպե՛ս ասա Իսրայելի որդիներին. «Ինձ ԵՄ ԵՄ-ն է ուղարկել ձեզ մոտ»» (Ելից 3:14-15):

Սա զարմանալի է: Աստվածաշնչում Աստված շատ տիտղոսներ ունի, բայց այստեղ հայտնված անունը տարբեր է: Այն տիտղոս չէ: Այն հայտնում է, թե իրականում ով է Աստված. «Ես եմ» կամ «Ես եմ որ է»: Այն նշանակում է. «Ես հավիտյան գոյություն ունեցողն եմ. Ես եղել եմ, Ես եմ ու հավիտյան լինելու եմ»: Նա կյանքի և գոյութե-

յուն ունեցող ամեն ինչի աղբյուրն է: Սա ի՞նչ նշանակություն ունի մեզ համար:

Հիսուսը սրա համար եկավ: Աստված մեզ մոտ եկավ այնպիսի տեսքով, որ կարողանանք տեսնել ու հասկանալ, այսինքն՝ մարդկային կերպով: Հիսուսը եկավ, որ մեզ ցույց տա, թե ինչ է նշանակում «Ես եմ»-ը մեր կյանքում: Նա ասաց. «Ես եմ կենաց հացը», «Ես եմ աշխարհի լույսը», «Ես եմ բարի Հովիվը», «Ես եմ հարությունն ու կյանքը»: Այսինքն՝ Հիսուսը ցույց տվեց, որ մեր Աստվածը այն ամենն է, ինչը երբևէ անհրաժեշտ է մեզ ներկա և հանդերձյալ կյանքի համար: Սակայն ամենակարևոր արտահայտությունը հետևյալն է. «Արքահամի լինելուց առաջ ԵՄ ԵՄ» (Հովհ. 8:58): Մովսեսը «Ես եմ»-ի կողմից կանչվեց՝ ազատելու Աստծո հնագույն ժողովրդին, բայց Հիսուսը՝ «Ես եմ»-ը, Անձամբ եկավ՝ մեզ փրկելու ամբողջ հավիտենականության համար:

Ելից գրքում տեսնում ենք, որ Իսրայելի հույսը Աստված է, ով միշտ գոյություն ունի, միշտ հոգատար է և միշտ գործում է: Մեր հույսը նույն Աստծո վրա է, ով Իրեն հայտնեց մեզ Հիսուսի մեջ և Նրա միջոցով մեզ տվեց հավիտենական կյանքի ու մեղքի ստրկությունից փրկվելու խոստումը: Նա կանչում է քեզ, որ Իրեն դառնաս, ընդունես Իր ով լինելը, Իր առջև ընդունես քո ով լինելը և Իր առաջարկած նոր կյանքով փոխարինես հին կյանքդ:

Փոլ Ուայթինկ



*«Սիրելիներ, ձեր անձերի համար վրեժխնդիր մի՛ եղեք, այլ տե՛ղ տվեք բարկությունը, որովհետև գրված է. «Վրեժխնդրությունը Իմն է, Ե՛ս պիտի հատուցեմ», - ասում է Տերը: Դրա համար, եթե թշնամիդ քաղցած է, կերակրի՛ր նրան, եթե ծարավ է, ջո՛ւր տուր նրան, որովհետև այսպես անելով՝ կրակի ածուխներ կղիզես նրա գլխի վրա: Չարից մի՛ պարտվիր, այլ չարը բարիով հաղթիր» (Հռոմ.12:19-21):*

## **Եկեղեցու պատմությունը (8)**

**Մ.թ. 1517-2000թթ.**

**Մ**ենք պետք է նշենք նաև, որ 18-րդ դարում կային նաև քրիստոնյա բազմաթիվ երաժիշտներ ու կոմպոզիտորներ, որոնք մեծ ներդրում ունեցան քրիստոնեության առաջխաղացման գործում: Նրանց թվում ուշագրավ էին Յոհան Մեբաստիան Բախը (1685-1750 թթ.), Գեորգ Ֆրիդրիխ Հենդելը (1685-1759 թթ.) և Ֆրանց Յոզեֆ Հայդնը (1732-1809 թթ.): Բոլոր ժամանակների մեծագույն օրատորիաներից մեկը Հանդելի «Մեսիա» ստեղծագործությունն է:

### **4. ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳԱՐԱՇՐՉԱՆ (1789-1914 թթ.)**

Չնայած 18-րդ դարի վերջին տարիները զուգորդվում էին միջազգային պատերազմներով, սակայն դրան հաջորդում էր միսիոներական մասշտաբային շարժումները, որոնց շնորհիվ Ավետարանը տարածվում էր ողջ աշխարհով: Միսիոներները տարբեր համայնքների դրոշների ներքո ծառայության անցան ու ձևավորվեցին միսիոներական կազմակերպություններ:

1793 թ.-ին Ուիլյամ Քերին, որին աջակցում էր նորաստեղծ Սկրրտական միսիոներական ընկերակցությունը, թողեց Անգլիան ու մեկնեց Հնդկաստան (1761-1834 թթ.): 1799 թ.-ին Կալկաթայի շրջանում նրան միացան երկու մկրտական հավատակիցներ, և հաջորդ 25 տարիների ընթացքում այս երեքը ստեղծեցին առաքելության շտաբկայաններ Բենգալում և դրա շրջակայքում: Քերին ինքնուսուցմամբ մի քանի լեզու սովորեց և Նոր Կտակարանը թարգմանեց բենգալերենի: Հետագա տարիներին նա վերահսկում էր Աստվածաշնչի թարգմանության ողջ գործընթացը և հրատարակեց քերականության գրքեր, բառարաններ և այլ ուղեցույցներ: Նա նախաձեռնեց առաքելության դպրոցներ և առաջատար մասնակցություն ունեցավ սոցիալական բարեփոխումներում:

Քերիի վաղ հաջողությունների մասին լուրերը շատերին քաջալերեցին միսիոներական դաշտ մուտք գործելու: Ստեղծվեցին միսիոներ-

րական ընկերակցություններ, ինչպիսիք են Լոնդոնի միսիոներական ընկերակցությունը (1795 թ.), Նիդեռլանդների միսիոներական ընկերակցությունը (1797 թ.), Եկեղեցու միսիոներական ընկերակցությունը (1799 թ.): Այս և այլ կազմակերպություններ աջակցեցին բազմաթիվ միսիոներների, որոնցից հայտնիներն են՝ Սամուել Մարտենը՝ Նոր Ձեռանդիայում, Դեյվիդ Լիվինգսթոնը՝ Արևելյան Աֆրիկայում, Մերի Սլեսորը՝ Արևմտյան Աֆրիկայում, Ս. Թ. Սթադը՝ Չինաստանում, Հնդկաստանում և Կենտրոնական Աֆրիկայում, ինչպես նաև Հադսոն Թեյլորը՝ Չինաստանում: Հիմնադրվեցին միսիոներական դպրոցներ, և սկսեցին անցկացվել միսիոներական համաժողովներ: Այս բոլոր իրադարձությունները երբեմն կոչվում են Երկրորդ մեծ արթնություն:

Սակայն 1760 թ.-ից սկսյալ՝ Արդյունաբերական հեղափոխությունն սկսեց արմատապես փոխել կենսակերպը Բրիտանիայում, այնուհետև այլ երկրներում նույնպես: Բնության ռեսուրսները օգտագործվեցին արդյունաբերական և տրանսպորտային ոլորտներում: Մշակվեցին ճանապարհներ, ջրանցքներ և կամուրջներ, գոլորշիով աշխատող նավերն ու էլեկտրաբարձերը փոխարինեցին մարդկանց և կենդանիների ուժին: Մարդիկ տեղափոխվեցին գյուղերից՝ հաստատվելով քաղաքներում՝ գործարաններում աշխատելու համար՝ հաճախ կոշտ և ստրկացնող պայմաններում: Կիրակին դարձավ աշխատողների արձակուրդային օր և օգտագործվեց հանգստի, ոչ թե եկեղեցական ծառայությունների մասնակցելու համար: Այսպիսով քանդվում էր քրիստոնեական կյանքի ձևը, և մարդիկ դառնում էին ավելի նյութապաշտ:

Հոգևոր անկումի այս տենդենցն ավելի վատթարացավ երկու անաստված մարդկանց՝ Կարլ Մարքսի (1818-1883 թթ.)՝ գերմանացի փիլիսոփայի, և անգլիացի բնագետ՝ Չարլզ Դարվինի (1809-1882 թթ.) գրություններով: Գուցե հնարավոր է Մարքսին արդարացի համարել՝ խոսելով Անգլիայի կապիտալիզմի շարիքների դեմ, սակայն 1848 թ.-ին նա հրապարակեց իր «Communist Manifesto»-ն, իսկ ավելի ուշ գրեց այլ հատորներ ևս՝ այդպիսով դնելով կոմունիզմի և սոցիալիզմի ուսմունքի հիմքերը: Մյուս կողմից, Դարվինը բացարձակապես դեմ էր ստեղծագործականությանը, որին աջակցում է Աստ-

վածաշունչը, և առաջարկեց էվոլյուցիոնիզմը: Նրա գլխավոր երկու գործերն են՝ «Տեսակների ծագումը» (1859 թ.) և «Մարդու ծագումը» (1871 թ.):

Հռոմեական եկեղեցին վճռական պատասխան տվեց արդյունաբերության, կոմունիզմի, սոցիալիզմի, էվոլյուցիոնիզմի և դրանց՝ քրիստոնեության առաջընթացի վրա ունեցած ազդեցությանը: 1864 թ.-ին Պիոս IX պապը (1846-1878 թթ.) թողարկեց սխալների սեղմագիր (ժամանակակից հասարակության մեջ տարածված ութսուն չարիքների ցանկ), իսկ 1870 թ.-ին կանչեց Վատիկանի 1-ին խորհրդի նիստ: Այս պապը (1854 թ.) ավելի վաղ դոգմա էր հրապարակել, թե Հիսուսի մայր Մարիամը բեղմնավորված է առանց աղանակյալ մեղքի: Սա հանգեցրեց բուռն քննարկումների, և հարցը պետք է բարձրացվեր խորհրդում: Երկու հարց կար, որոնց Հռոմի պապը փափագում էր հասնել՝ վերահաստատել իր դիրքը որպես Քրիստոսի փոխանորդի և հաստատել պապականության անսխալականության դոգման:

Խորհրդում Հռոմի պապը հասավ իր նպատակներին՝ մեծամասնության ձայներն ունենալով, ինչը նրան ազատություն տվեց՝ հռչակելու իր ուզած հայտարարությունները: Խորհուրդը պետք է ցրվեր մոտ մեկ տարի անց՝ ֆրանս-պրուսական պատերազմի (1870 թ.-ի հուլիս) և իտալացի ազգայնականների կողմից Հռոմի գրավման պատճառով (1870 թ.-ի դեկտեմբեր):

Չնայած բողոքականության, կրոնի ազատության, հանրակրթական դպրոցների, աստվածաշնչյան հասարակությունների և դարաշրջանի շատ այլ «չարիքների» համար դատապարտող պապական գրասենյակից հնչած դաժան հայտարարություններին՝ բողոքականությունը շարունակում էր աճել: «Փրկության բանակ» կազմակերպությունը հիմնվեց Ուիլյամ Բոթի կողմից 1878 թ.-ին, «YMCA»-ն հիմնվեց Ջորջ Ուիլյամսի կողմից, և ավետարանչությունը շարունակվեց նվիրված մարդկանց քարոզչության միջոցով, ինչպիսիք են՝ ամերիկացի ավետարանիչներ Գ. Լ. Մուդին (1837-1899 թթ.) և Իրա Գ. Մանկին: Մուդին զարգացրեց Կիրակնօրյա դպրոցի շարժումը (սկսվել էր 1780 թ.-ից՝ Անգլիայի Ռոբերտ Ռեյքսի կողմից), քարոզեց բանակայիններին, ստեղծեց իր եկեղեցին, ծառայեց «YMCA»-ի հետ և երկու անգամ շրջագայեց Մեծ Բրիտանիայում 1873-1875 թթ.-ին:

Ամերիկա վերադառնալով՝ նա շարունակեց ավետարանչությունը. հիմնեց դպրոցներ, կազմակերպեց համագումարներ և 1886 թ.-ին հիմնադրեց Չիկագոյի ավետարանչական ընկերությունը, որն այսօր հայտնի է որպես Մուդի աստվածաշնչյան ինստիտուտ: Սանկիսի կիլիշեն նրա ստեղծած հարյուրավոր օրհներգերի, մեղեդիների և Մուդիի ավետարանական քարոզարշավներում երգեհոնահարության համար:

Քրիստոնյա երաժիշտների և կոմպոզիտորների նման քրիստոնեության տարածման մեջ այլ ներդրողներ նույնպես եղան: Մենք այստեղ նշում ենք ֆրանսիացի Գուստավ Գորին (1832-1883 թթ.), որը մեծ կարողություն ուներ՝ նկարելու և պատկերագրողումներով նկարագրելու պատմության մեջ մեծ իրադարձություններ, մասնավորապես՝ Աստվածաշնչում արձանագրված իրադարձություններն ու առակները: Իրականում նա արտադրեց 241 պատկեր, որոնք հայտնի են որպես Գորի Աստվածաշունչ՝ տպագրված Կասելի կողմից 1866 թ.-ին: Այս պատկերագրողումները շատ օգտակար էին անգրագետների համար:

Ի վերջո կար մի քրիստոնեական շարժում, որը 19-րդ դարի սկզբին տարածվեց ամբողջ աշխարհով, գործում է մինչ օրս և հայտնի է որպես «Եղբայրների շարժում» անունով: Այն սկսվեց մի քանի նվիրյալ քրիստոնյաներով, ովքեր առանձնացան Անգլիայի եկեղեցուց և այլ հարանվանություններից, քանի որ նրանց արգելում էին հետևել Աստվածաշնչի ուսմունքներին: Հաղորդակցության և Աստվածաշնչի ուսումնասիրության համար նրանք նախ հավաքվեցին տներում և դահլիճներում, սակայն շատ ժամանակ չանցած՝ հիմնեցին տեղական եկեղեցիներ՝ պահպանելու առաքյալների ուսուցումները, որոնք գրված են Նոր Կտակարանում: Նրանք պահպանեցին Մեծ հանձնարարականը, նորադարձների ջրային մկրտությունը՝ ջրի մեջ ընկղմելով, Տերունական ընթրիքը և ավետարանչական ժողովները:

Ի սկզբանե եղբայրները ներգրավված էին և խրախուսում էին միսիոներական շարժումը ոչ միայն Բրիտանական կղզիներում, այլև Եվրոպայում, Հնդկաստանում և շատ այլ երկրներում: Այսօր «Եղբայրների շարժման» միսիոներներ կան աշխարհի ավելի քան 100 երկրներում:



## Աստծո տված պարգևները

### Ա Կորնթացիներին 12 (մաս 1)

Կյանքի ընդհանուր հաճույքներից մեկը ինչ-որ լավ բան սիրելով անելու դեպքում բավարարության զգացում ունենալն է: Կարևոր չէ, թե ինչպիսի գործ է այդ. գուցե ծաղիկ տնկելը, համեղ ճաշ պատրաստելը, շարադրություն գրելը, մեքենան վերանորոգելը...: Մի լավ գործ հաճույքով կատարելու դեպքում բավարարության զգացում ունենալը շատ յուրահատուկ հաճույք է: Այդ զգացումը շատ բան է հայտնում մեր մասին: Այն նախևառաջ ցույց է տալիս, որ ստեղծված ենք Աստծո պատկերով ու նմանությամբ: Սա մի փոքր արտացոլում է այն զգացումը, որ Աստված ունեցավ, երբ երկիրն ստեղծեց: Նա նայեց Իր ստեղծագործությանը ու տեսավ, որ բարի է: Աստված բավարարվածության զգացում ունեցավ յուրահատուկ գործ անելու և այն հաճույքով անելու ժամանակ: Քանի որ մենք ստեղծված ենք Աստծո պատկերով, մեր մեջ ունենք բավարարվածության զգացում ունենալու հակումը:

Աստվածաշնչում մի քանի հատվածներ կան, որոնք խոսում են հոգևոր պարգևների մասին: Դրանց մասին կարդում ենք Եփես. 4-րդ, Հռոմ. 12-րդ և Ա Կորնթ. 12-րդ գլուխներում: Այս ամբողջ ուսմունքի հիմքը պարզապես սա է. Աստված քեզ շատ ավելին է տվել, քան պատկերացնում ես: Եկեղեցիներում հաճախ ականատես ենք լինում, թե ինչպես են մարդիկ կորցնում այդ հիանալի բավարարվածության զգացումն ունենալու առիթը: Նրանք իրենք իրենց մասին շարունակ կարծում են, թե ոչինչ են և ոչինչ չեն կարող անել: Բայց Աստված ասում է, որ յուրաքանչյուր քրիստոնյա ունի Իր կողմից տրրված հատուկ պարգև:

Ահա թե ինչու է Պողոսը հոգևոր պարգևների մասին իր բացատրությունը սկսում հետևյալ խոսքով. «Արդ, ինչ վերաբերում է հոգևոր պարգևներին, եղբայրներ, չեմ ուզում, որ անտեղյակ լինեք» (Ա Կորնթ. 12:1): Նախքան Սուրբ Հոգու և հոգևոր պարգևների մասին մտածելը ուզում են նախազգուշացնել ձեզ մի հետաքրքիր երևույթի

մասին, որը տարածված է մարդկանց մեջ: Այն կոչվում է պատճառա-  
հետևանքային արձագանք: Պատկերացրե՛ք՝ մի խումբ մարդիկ որո-  
շակի ճշմարտություն են վերցնում ու ծայրահեղ կերպով աղավաղում  
այն: Օրինակ՝ ինչ-որ մեկը սկսում է խոսել միայն Սուրբ Հոգու մա-  
սին և առաջ բերել ամեն տեսակի ծայրահեղական ու ոչ սուրբգրա-  
յին պնդումներ ձեր կյանքում Նրա գործի վերաբերյալ: Այս ծայրա-  
հեղական ուսմունքն ինչպիսի՞՞ ազդեցություն է թողնում մյուս քրիս-  
տոնյաների վրա: Այն ստիպում է արձագանքել, և այդ ուսմունքի դեմ  
արձագանքը հաճախ դրսևորվում է այլ տեսակի ծայրահեղությամբ՝  
անտեսելով Սուրբ Հոգուն և անհանգստություն զգալով, երբ ինչ-որ  
մեկը Նրա մասին ակնարկում է: Սուրբ Հոգու մասին իրենց տեսա-  
կետը ուրիշի սխալ ու ծայրահեղական ուսմունքին և ոչ թե Աստվա-  
ծաշնչի սովորեցրածին արձագանքելն է: Մենք պետք է զգույշ լինենք,  
որ ճշմարտության մասին մեր պատկերացումը հիմնված լինի Աստ-  
վածաշնչի վրա:

Ունաք վիրավորում են Սուրբ Հոգուն՝ Իր մասին ծայրահեղական  
և ոչ սուրբգրային պնդումներ անելով, իսկ ուրիշներն ընդհանրապես  
Նրան անտեսելու վտանգի առջև են կանգնած: Այս խնդրի լուծումը  
աստվածաշնչային հատվածներին վերադառնալն է ու փորձել հաս-  
կանալը, թե իրականում ինչ են դրանք սովորեցնում մեզ: Մեր ընտ-  
րած հատվածի առաջին համարն ասում է. «Արդ, ինչ վերաբերում է  
հոգևոր պարզկներին, եղբայրներ՛ր, չեմ ուզում, որ անտեղյակ լինեք»:  
Ես ուզում եմ, որ իմանաք, թե ինչպես է Սուրբ Հոգին ձեզանից յու-  
րաքանչյուրին հատուկ պարզև տալիս ծառայության համար, որպես-  
զի թե՛ դուք, թե՛ մյուսները կարողանան օգտվել:

Սուրբ Հոգու ուշադրության կենտրոնն ու մտադրությունը Ինքն Ի-  
րեն, քրիստոնյաներին կամ եկեղեցուն փառավորելը չէ, այլ Տեր Հի-  
սուս Քրիստոսին (Հովհ. 16:14): Աստծո մեզ տված պարզկները մեզ  
խելացի կամ վերադաս դարձնելու համար չեն, այլ Հիսուս Քրիստո-  
սի Տեր լինելը հռչակելու. Նա՛ պետք է փառավորվի, ոչ թե մենք: «Հի-  
սուսը Տեր է». սա երկրպագության հայտարարություն է: Ծառայու-  
թյունը երկրպագությունից առաջ է գալիս:

Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում Ա Կորնթ. 12:4-7-ից քաղված փոխզիջման չենթարկվող կարևոր ճշմարտություններ:

Չկա վերստին ծնած քրիստոնյա, ով Սուրբ Հոգուց գոնե մեկ պարզև ստացած չլինի:

Գուք ունեք եզակի և հատուկ պարզև՝ տրված Սուրբ Հոգու կողմից:

Սուրբ Հոգին, ով անցյալում գորացրեց հավատի հզոր տղամարդկանց ու կանանց, նույն Հոգին է, որ ձեզ պարզևներ շնորհեց:

Ձեր՝ քրիստոնյա դառնալու օրը շատ զարմանալի բաներ պատահեցին.

- Փրկագնվեցիք Քրիստոսի՝ խաչի վրա կատարած փրկագործության շնորհիվ:
- Ձեր մեղքերը ներվեցին:
- Որդեգրվեցիք Աստծո ընտանիքում որպես Իր սիրելի զավակ:
- Սուրբ Հոգով կնքվեցիք, և Նա եկավ՝ ձեր մեջ բնակվելու:

Ձեր կյանքի մնացած մասն ապրելու եք՝ բացահայտելով այդ օրվա մեջ կատարվածի բոլոր հիանալի հետևանքները: Երբ քրիստոնյա դարձաք, Սուրբ Հոգին ձեզ հիանալի պարզև տվեց, մասն այն օգտագործելու գորությունը: Քրիստոսի Մարմնում անպիտաններ չկան: Սա նշանակում է, որ հոգևոր պարզև ունենալը բացառիկ քրիստոնյա լինելու նշան չէ, քանի որ բոլոր քրիստոնյաներն առնվազն մեկ պարզև ունեն: Գուցե չզգաք, որ Սուրբ Հոգուց հատուկ պարզև ունեք, բայց դարձյալ այս պարզևը կախված չէ ձեր զգացողությունից, այլ՝ այդ պարզևի մասին Աստծո Խոսքում գրվածից:

Ռեքս Տիրլավ  
(Շարունակելի)



## Քրիստոնեական միասնություն

### Գործք 2:38-47

Որքան հիշում եմ, միասնության թեման բազում կանադացիների համար քաղաքական հիմնահարց է եղել: Աշխարհի բոլոր ազգերը պայքարում են միասնության համար: Ազգի ուժը կախված է ժողովրդի միասնականությունից և համերաշխությունից: Նմանապես մեր հոգևոր կյանքը պայմանավորված է մյուս հավատացյալների հետ մեր միասնությամբ: «Թվաքանակը ուժ է» արտահայտությունը ճիշտ է, եթե այդ «թվաքանակը» միասնական է (Դատ. 21):

Պատմության ողջ ընթացքում համաշխարհային միասնություն ձեռք բերելու բոլոր ջանքերը ձախողվել են: Ձախողվել են բազմաթիվ միություններ, նույնիսկ քաղաքական միությունները, ինչպես օրինակ՝ ԽՍՀՄ-ը: Ձախողվել է անգամ Էկումենիկ շարժումը՝ քրիստոնեական եկեղեցիների միավորման տիեզերական շարժումը: Քրիստոնեական միասնությունը բոլոր քրիստոնեական կրոնները մեկ կառավարության և իշխանության ներքո համախմբելու համաշխարհային փորձը չէ: Դա չպետք է և հնարավոր չէ անել: Աստվածաշունչն արգելում է դա: Քրիստոնեական միասնությունը ճշմարիտ հավատացյալի առօրյա կյանքում դրսևորվող հոգևոր վիճակն է: Աստվածաշունչը հստակորեն ուսուցանում է, որ հոգևոր կյանքը չպետք է ապրել մենակ, այլ միասին:

«Մի՞թե երկուսը կզման միասին, եթե համաձայնված չլինեն» (Ամովս 3:3):

Իհարկե, ո՛չ. կյանքը ճամփորդություն է, և այն կարող է շատ տհաճ լինել, եթե քայլերն այլախոհների հետ: Քրիստոնեական կյանքում և վկայության մեջ խիստ կարևոր է միասնությունը: Ջարմանալի չէ, որ Գործք 2-րդ գլխում հավատացյալներն ուզում էին ամեն օր միասին լինել:

«Ամեն օր միաբանությամբ տաճարում էին լինում և հաց էին կրտ-

բում տներում, ուրախությամբ և սրտի միասնությունով կերակուր էին ուտում» (Գործք 2:46):

Դավիթ թագավորն ասաց.

«Մեծարեցե՛ք ինձ հետ Տիրոջը, իրար հետ բարձրացնենք նրա անունը» (Մաղ. 34:3):

Պատկերացնո՞ւմ ես այնպիսի եկեղեցական պաշտամունք, որտեղ միակ հավատացյալը դու ես. մտնում ես մենակ, աղոթում ու երգում ես մենակ. չկա հաղորդակցություն: Հավատացյալների ճշմարիտ ընտանիքի մեջ մեկի ցավը մյուս բոլորի ցավն է դառնում, մեկի ուրախությունը մյուսների ուրախությունն է դառնում: Իսկ ո՞րն է այդպիսի միասնության բանալին. սերը. «Որ նրանց սրտերը մխիթարվեն սիրով միացած և կատարյալ իմաստության ամեն ճոխությանը հասնեն» (Կող. 2:2):

Այնտեղ, որտեղ կա քրիստոնեական սեր, կա նաև միասնություն: Առանց սիրո՝ քրիստոնեությունը խեղկատակություն է:

Ի՞նչ կասես քո եկեղեցու մասին: Արդյո՞ք այն այսպիսին է.

«Միայն թե Քրիստոսի Ավետարանին վայելող կերպով գնացեք, որ թե գամ և տեսնեմ ձեզ և թե հեռու լինեմ ու լսեմ ձեր մասին, թե դուք հաստատ եք, մեկ հոգով և մեկ շնչով պատերազմակից՝ Ավետարանի հավատքի համար» (Փիլ. 1:27):

Յուրաքանչյուր եկեղեցի այնպիսի նվիրյալ հավատացյալների կարիք ունի, ովքեր միաբանված են Աստծուն ծառայելու փափագով: Մտածիր, թե ինչպես կարող ես սփռել Աստծո ուրախությունը, խաղաղությունն ու սերը:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան



## Բաղասամ

### Թվոց 22-31

Հին Կտակարանի անձնավորություններից Բաղասամ անունով մարգարե կար, որ միևնույն ժամանակ հմայություն էր անում: Բաղասամը հակասություններով լի մարդ էր: Երբ Իսրայելի ժողովուրդը Եգիպտոսից դուրս եկավ՝ Քանանի երկիր գնալու, եկավ Մովաբի և Մադիանի երկիր, որտեղով պետք է անցներ: Մովաբի թագավորը՝ Բաղակը, ուզեց մեկին գտնել, որ Իսրայելի ժողովրդին անիծի, և Բաղասամի մոտ մարդ ուղարկեց այս պաշտոնի համար՝ խոստանալով վարձատրել: Երբ Բաղասամը լսեց լուրը, մերժեց, բայց հետո գնաց: Թագավորը նրան լեռ տարավ, որ այդտեղից տեսնի Իսրայել ժողովրդի բազմությունը, սակայն Բաղասամն ասաց. «Ահա եկել եմ քեզ մոտ, բայց ես զորություն ունե՞մ մի բան ասելու: Աստված ինչ որ իմ բերանը դնի, այն էլ կասեմ»: Լեռան վրա սեղաններ շինեցին ու խոյեր գոհ մատուցեցին Աստծուն, սակայն երեք անգամ հարցնելուց հետո Աստված դարձյալ ասաց Բաղասամին, որ օրհնի Իսրայելի ժողովրդին: Բաղակը շատ բարկացավ և Բաղասամին տուն ուղարկեց, որովհետև նրան այնտեղ էր բերել ժողովրդին անիծելու համար:

Այս մի քանի գլուխներում Բաղասամի մասին տպավորիչ է հետևյալը. Բաղակի պատգամավորները Բաղասամին խնդրեցին, որ գնա թագավորի մոտ՝ Իսրայելի ժողովրդին անիծելու: Բաղասամն Աստծո մարդ էր, գիտեր նրանց տալու պատասխանը, սակայն մարդկանց ասաց, որ այդ գիշեր սպասեն այնտեղ և հաջորդ օրը առավոտյան իրենց կպատասխանի Աստծուն հարցնելուց հետո: Այդ գիշեր Աստված Բաղասամին հարցրեց, թե այդ հեթանոս մարդիկ ի՞նչ գործ ունեն իր տան մեջ: Բաղասամը փորձեց արդարացնել ինքն իրեն, սակայն Աստված ասաց. «Դրանց հետ չգնա՛ս»:

Արդյոք այսօր մենք նույնը չե՞նք անում: Երբ գիտենք, որ մի բան սխալ է, բայց հարմար է մեր խորհուրդներին, միջավայրին, պարագաներին, ուզում ենք այն արդարացնել և աղոթում ենք Աստծուն, որ պատասխանի: Պատասխանն իմանալով հանդերձ, կարծես ջանք

ենք գործադրում փոխելու Աստծո միտքը: Մա նման է մեր փոքրիկ զավակների արածին, որ հակառակ իրենց ծնողների բացասական պատասխանի՝ պնդում են իրենց խոսքը մինչև ձանձրացնեն և ստիպեն «այո» ասել: Մենք նույնպես կարծում ենք, որ Աստված այդպիսին է: Բաղասամն իսկ ասաց. «Աստված մարդ չէ, որ սուտ խոսի, ոչ էլ մարդու որդի, որ զոջա. մի՞թե կասի ու չի կատարի կամ կխոսի և չի՞ իրականացնի»: Աստված քանիցս ասաց Բաղասամին, որ օրհնի Իսրայելի ժողովրդին:

Այսօր Աստված մեզ չի ասում. «Հետո եղող մարդն ո՞վ է: Գրպանի շահած դրամդ ո՞ր է: Այդ բռնած դիրքդ ի՞նչ է: Գիմացինին ցուցաբերած ոչ քրիստոնեական հոգիդ ի՞նչ է: Դու կարծում ես, թե հավատացյալ ես, մարգարե՞ ես, բա այս վարմունքը և վարվելակերպն ի՞նչ են»: Մենք երբեմն փորձում ենք արդարացնել մեր արածը, բայց Աստված Իր միտքը չի փոխի»: Դու ուզածիդ չափ քո արարքն արդարացրու, քո արած սխալը ճիշտ համարիր, բայց եթե Աստծո Խոսքի լույսի տակ այն սխալ է, դու և ես չենք կարող համոզել Նրան, Աստծո միտքը չենք կարող փոխել:

Բաղակի պատգամավորները դարձյալ գալիս են, և Բաղասամը այդ մարդկանց նորից հյուրընկալում է իր տանը, որպեսզի Աստծուն հարցնի, թե արդյոք կարո՞ղ է գնալ, թե՞ ոչ: Աստված Իր ասելիքը մեկ անգամ է ասում: Եթե հասկանում ես, սպասիր պատժի: Այս անգամ Աստված ասում է՝ գնա՛: Ահա այն մարդը, որ ասել էր, թե ոսկի էլ տան, չի գնա, գնաց:

Սատանան փորձում է մեր համբերությունը և համոզում, որ այն, ինչ մեղք է, սխալ է, այլևս սովորական է դարձել ու չի վնասում: Նույնը եղավ Բաղասամի պարագայում: Նա պատրաստվեց մարդկանց հետ գնալ առանց անդրադառնալու այն փաստին, որ իր արածը սրբախալ է, սակայն ճանապարհին իր սխալը տեսավ: Ե՞րբ: Երբ որ Աստծո հրեշտակին տեսավ: Երեք անգամ նրա էշը ճանապարհից շեղվեց, և Բաղասամը երեք անգամ էշին ծեծեց: Էշը ինչ-որ բան էր տեսնում, որ նա չէր տեսնում: Իր աչքի առջև Բաղակի պալատը, նրա ոսկին կար: Երբ որ աշխարհի փառքին, հմայքին ես նայում, վստահ եղիր՝ Աստծուն չես տեսնի, Աստծո փառքին չես արժանանա: Երբորդ ան-

գամ էշը խոսեց՝ ասելով. «Ինչո՞ւ ես ինձ ծեծում: Հանցավորը դու ես, մեղավորը դու ես, ահա հրեշտակը սրով կանգնած է և սպանելու է քեզ: Դու այնքան տարված ես, որ Աստծո հրեշտակին չես տեսնում, և ինձ ծեծում ես»: Որքան դյուրին է մեր արած մեղքերի համար հանցանքն ուրիշի վրա բարդելը, զոջալու փոխարեն ուրիշին հանդիմանելը: Շփոթության մեջ Աստծո ձեռքը չենք տեսնում: Էշի խոսելուց հետո Բաղասամի աչքերը բացվեցին, և գիտակցեց իր հանցանքը: Մեր սխալները չենք տեսնի, մինչև որ Աստծո առջև չգանք: Սակայն Բաղասամը շարունակեց իր ճամփան և Բաղակի հետ խնջույքի նրստեց: Ինչպե՞ս կարող է Աստծո մարդն Աստծո ժողովրդի թշնամիների հետ խնջույքի նստել: Մի՞թե մենք էլ նույնը չենք անում մեղավորների հետ՝ խոսելով Աստծո գործի, Աստծո զավակների, Աստծո տան դեմ:

31:16-ում Աստված Բաղասամին սպանել է տալիս Աստծո թշնամիների տված խորհրդի (վարդապետության) համար. Բաղասամն ասաց Բաղակին. «Այս ժողովրդին չեմ կարող անիծել, որ Աստված նրանց հարվածի, բայց մի միջոց կա: Եթե կարողանաք ստիպել այս ժողովրդին մեղք գործել, Աստված նրանց կհարվածի: Գնացե՛ք և նրանց հետ ապրե՛ք, խնամություն արե՛ք: Եվ երբ Աստծո ժողովուրդը հեթանոս ժողովրդի հետ խառնվի, և այդ պատճառով նրանք սկսեն ձեր չաստվածներին պաշտել, Աստված կբարկանա և կանիծի նրանց»: Իսկապես, Իսրայելի ժողովուրդն իր Աստծուն թողեց, գնաց մովսրացիների չաստվածներին պաշտելու, և Աստված դրա համար նրանց միջից 24,000 մարդ սպանեց: Քանի որ այդ գաղափարը Բաղասամին էր, նրան էլ պատժեց:

Այսօր պատկերը նույնն է, նույնն են եկեղեցին և աշխարհը, հավատացյալները և մեղավորները: Աստծո Խոսքն ասում է՝ մենք նրանց հետ գործ չունենք: Նրանց հետ չպետք է խառնվենք, նրանց ընտրած ճանապարհները չպետք է ընտրենք: Բաղասամն այսօր քեզ և ի՞նձ է ասում: Այո՛, ինձ ասում է, որ Աստված նույնն է, Նրա միտքը չի փոխվում, ես պետք է ենթարկվեմ Նրան, ոչ թե Նա՝ ինձ: Այդ ժամանակ կկարողանամ Տիրոջ համար հաճելի զավակ լինել: Իսկ եթե ոչ, ապա երկուսի միջև տատանվելու եմ, աջ ու ձախ եմ գնալու, վախճանս Բաղասամի պես է լինելու: Եթե ուզում ես արդարի պես մեռնել, պետք է արդարի պես էլ կյանք ապրես:



## **Մի՛ դատիր**

### **Մատթեոս 7:1-6**

**Բ** ոլորս լսել և օգտագործել ենք «Մի՛ դատեք» կամ «Դատելը ճիշտ չէ» խոսքերը: Մարդիկ դրանք օգտագործում են՝ տարբեր բաներ նկատի ունենալով կամ տարբեր մտադրություններով ու հասկացողությամբ: Ի՞նչ նկատի ունի Աստվածաշունչը Հիսուսի ասած «Մի՛ դատեք» խոսքով:

Ուրիշներին չդատելու հրահանգը գուցե Հիսուսի խոսքերից ամենատարածված մեջբերումն է: Եկե՛ք դիտարկենք հասարակության կողմից օգտագործվող մի քանի ձևեր.

- Չդատել նշանակում է չեզրակացնել, որ ինչ-որ բան կամ ինչ-որ մեկը սխալ է:
- Ոմանք օգտագործում են այս հրահանգը՝ լռեցնելու իրենց քննադատողներին՝ Հիսուսի ասածը մեկնաբանելով այսպես. «Դուք իրավունք չունեք ասելու ինձ, որ ես սխալ եմ»:
- Ոմանք «Մի՛ դատեք» խոսքը մեկնաբանում են որպես բոլոր բացասական գնահատականների դատապարտում:
- Ուրիշներ կարծում են, թե չդատել նշանակում է ինչ-որ բան չգնահատել որպես սխալ:
- «Մի՛ դատեք» նշանակում է որևէ մեկին մի՛ գնահատեք կամ մի՛ քննադատեք որևէ բանի համար:

«Մի՛ դատեք» խոսքն այնքան լայն տարածում է գտել, որ նույնիսկ քրիստոնեական շրջանակներում մարդիկ օգտագործում են այն՝ հասկացնելու համար, որ ոչ մի քրիստոնյա որևէ մեկի գործողությունների համար դատավճիռ կայացնելու իրավունք չունի: Իրականում, որոշ շրջանակներում ուրիշներին դատելը գրեթե արգելված է: Այնուամենայնիվ, այս հատվածն ամենևին դա չի սովորեցնում: Աստվածաշունչը շատ պարզ սովորեցնում է, որ Աստծո զավակը պետք է

ունենա ճիշտը սխալից զանազանելու ու Սուրբ Գրքին համահունչ դատավճիռ կայացնելու ունակություն:

Նույն գլխում՝ 15-16 համարներում, Հիսուսը զգուշացնում է մեզ սուտ մարգարեներից: Մենք ինչպե՞ս կկարողանանք բացահայտել կեղծիքը, եթե չկարողանանք զանազանել սխալը ճշտից, կամ չիմանանք որն է ճշմարիտ, որը՝ սուտ: Մենք նրանց ճանաչում ենք իրենց պտուղներից: Ուստի նրանց ճանաչելու համար պետք է կարողանանք դատել նրանց գործողությունները, խոսքերն ու ուսուցումները: Ինչ-որ մեկն ասել է. «Ես դատավոր չեմ, այլ պտուղներ ստուգող, և կարող եմ ասել՝ պտուղը վա՞տն է, թե՞ ոչ»:

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ դատավճիռ կայացնել, բայց այդ դատողությունները պետք է լինեն արդար ու խորաթափանց (Հովհ. 7:24բ, Ա Կորնթ. 5:11-13): Քանի որ դատելը սուրբգրային է, մենք կարող ենք և պետք է դատենք: Աստվածաշնչի՝ ուրիշներին դատելու հրամանը չի նշանակում, որ պետք է մեղքի դեմ վարվելու որևէ մեխանիզմ չլինի: Աստվածաշնչում «Դատավորաց» անունով մի ամբողջ գիրք կա: Այս դատավորներին հենց Աստված էր բարձրացրել (Դատ. 2:18): Անապատում Մովսեսը դատեց ժողովրդին (Ելից 18:13): Ժամանակակից դատական համակարգը, ներառյալ դատավորները, հասարակության բարօրության անհրաժեշտ երաշխիքն են: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ զանազանող լինել և արդար դատել:

Որպեսզի կարողանանք դա անել, պետք է Աստծո ամբողջ խորհուրդն իմանանք (Գործք 20:27): Այդ ժամանակ Աստծո Խոսքի լույսի ներքո կիմանանք՝ որն է մեղքը և որը՝ ոչ (Ա Թես. 5:21): «Սի՛ դատեք» ասելով՝ Տեր Հիսուսը նկատի չունեք, թե ամեն ինչ անցողիկ է, կամ ոչ որ իրավունք չունի մատնանշելու սխալ արարքը: Երբ Աստվածաշունչն ասում է չդատել, դա նշանակում է չդատել Աստվածաշունչի ուղեցույցներից և սկզբունքներից դուրս: Եթե այդպես է, ապա ո՞րն է Աստվածաշնչի ուղեցույցներից և սկզբունքներից դուրս դատելը:

**Արհեստական դատավճիռը սխալ է:** Ինչ-որ մեկին իր արտաքին տեսքի հիման վրա դատելը սխալ է (Հովհ. 7:24): Անմիտ է եզրա-

կացություններ կայացնելը նախքան փաստերն ուսումնասիրելը (Առակ. 18:13): Փարիսեցի Միմոնը իր դատավճիռը կայացրեց կնոջ վերաբերյալ՝ ելնելով նրա համբավից, բայց չկարողացավ տեսնել, որ կինը ներված էր: Նա ստացավ Հիսուսի հանդիմանությունը՝ անարդար դատողություն անելու համար (Գուկ. 7:36-50):

**Կեղծավոր դատավճիռը սխալ է:** Հիսուսի՝ ուրիշներին չդատելու հրամանին նախորդում է կեղծավորների համեմատությունը (Մատթ. 6:2, 5, 16) և հաջորդում կեղծավորության դեմ նախազգուշացումը (Մատթ. 7:3-5): Երբ մատնանշում ենք ուրիշների մեղքը, երբ ինքներս ենք նույնն անում, դատապարտում ենք ինքներս մեզ (Հռոմ. 2:1): Հիսուսն ասում է, որ չպետք է ուրիշներին դատենք կամ նրանց վերելից նայենք, նրանց հետ մեղավորների պես վարվենք, եթե մենք նույն բաներն ենք անում: Դա անելը կեղծավորություն է:

**Չներող դատավճիռը սխալ է:** Մենք պետք է բոլորի հետ քաղցրությամբ վարվենք (Տիտ. 3:2, Գաղ. 6:1): Ողորմածներին է ողորմություն ցուցաբերվում (Մատթ. 5:7): Հիսուսը զգուշացրեց. «Որովհետև ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք, և ինչ չափով որ չափում եք, դրանով էլ ձեզ պիտի չափվի» (Մատթ. 7:2): Այլապես մեզ ողորմություն և ներողամտություն չի ցուցաբերվի, եթե մենք ողորմած ու ներողամիտ չլինենք: Մենք պետք է հեզ ու ներելու պատրաստակամ լինենք: Սա չի նշանակում անտեսել մեղքը կամ սխալը կամ լուռ մնալ՝ հանուն խաղաղության ու միասնության: Այդպես անելը կաղավաղի արդարությունը և Աստծո՝ եկեղեցու համար ունեցած մաքուր, սուրբ և անարատ լինելու ծրագիրը (Մատթ. 18:15-17, ԲՏիմ. 4:2-3):

**Սեփական անձի մասին մեծամտելը սխալ է:** Մենք կանչված ենք խոնարհության. «Աստված ամբարտավաններին հակառակվում է» (Հակ. 4:6): Հիսուսի՝ փարիսեցու և մաքսավորի առակում փարիսեցին վստահ էր իր արդարության վրա և այդ հպարտ դիրքից դատում էր մաքսավորին: Այնուամենայնիվ, Աստված տեսավ սիրտը և չարդարացրեց ինքն իրեն արդար համարող փարիսեցուն, ով կարծում էր, թե ինքն ավելի լավն է, քան մյուս մարդիկ: Նա մնաց իր մեղքերի մեջ ու չներվեց (Գուկ. 18:9-14):



Այս հոդվածը կարդացողներից ինչ-որ մեկը կարող է այս փարիսեցու պես շատ կրոնասեր լինել, ով կանոնավոր հաճախում է եկեղեցի և շատ առաքինի կյանքով է ապրում, բայց հպարտ է. վստահում է իր անձին ու դատապարտում մյուսներին, ովքեր չեն հասնում իր չափանիշին: Գուցե ինքն իր արդարությանը ապավինող, կրոնական դաստիարակություն ունեցող ու առաքինի մարդ է, որը նույնիսկ փրկված չէ, բայց դատում է փրկվածին: Աստված ուզում է, որ խոնարհ լինես ու չվստահես քո կրոնին կամ քո արդարությանը, այլ ընդունես Հիսուս Քրիստոսին՝ որպես քո Փրկչի: Մի՛ դատեք կեղծավորների պես, այլ արդար՝ դատեք: Աստված, որ գննում ու ճանաչում է սիրտը, գիտի խոնարհներին և ներում է նրանց, ովքեր Իր մոտ են գալիս խոնարհությամբ:

Բաֆֆի Չափարյան

